ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/11

ք.Երևան « 09 » «հոկտեմբեր » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն , (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է **3302000** (երեք միլիոն երեք հարյուր երկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 1915000 (մեկ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 1917000 (մեկ միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ
ք. Երևան, Արշակունյաց-63	Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արտաշատ մ/ճ
Հ/Հ 900011175016	h/h 2051532055341001
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 84485538
ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«09» «հոկտեմբեր» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայությունների								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	50531200/2	էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ցուցակը՝ գնացուցակը ներկայացվում է կից N1 հավելվածով: Ծառայությունների մատուցման ընթացքում՝ 1) Վերանորոգման ենթակա էլեկտրական սարք-սարքավորումների կառուցվածքի առանձին մասերի ձեռք բերումը և փոխարինումը նորով պետք է իրականացվի Կատարողի կողմից: 2) Վերանորոգման ենթակա էլեկտրական սարք-սարքավորումների անհրաժեշտությամբ պայմանավորված տեղափոխումը պետք է իրականացվի Կատարողի կողմից: 3) Բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը տրամադրվում է Կատարողի կողմից:	ՀՀ դրամ	3302000	1	ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին և ՔԿ հիմնարկներ***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2019թ.

Գնացուցակ

Հ/Հ	Գնման ենթակա ծառայությունների և ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերի անվանումները	Միավորի առավելագույն գինը, ՀՀ դրամներով
	Գնման ենթակա ծառայությունների անվանումները	
	1. Սառնարանների վերանորոգման և պահպանման ծառայություն	
1.	Սառնարանի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
2.	Կոնդեսատորի մաքրում	4000
3.	Կոնդեսատորների հովացման ստուգում և վերանորոգում	8000
4.	Ֆրիոն գազի քանակի ստուգում և լիցքավորում (1 կգ)	15000
5.	Ֆրիոն գազի հնարավոր արտահոսքի որոնում և դեֆեկտորի վերանորոգում	8000
6.	Կոմպրեսորի աշխատանքի ստուգում և վերանորոգում կամ փոխարինում նորով	15000
7.	Սառնարանների հանգույցների և առանձին դետալների ստուգում և դրանց փոխարինում	5000
8.	Էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում	3000
9.	Ազդանշանային համակարգի և սառնարանի բռնակ-կարգավորիչների ստուգում և անհրաժեշտության դեպքում ամրաձգում	3000
10.	Կոնտակտների ձգվածության ստուգում և կարգավորում	3000
11.	Սառեցնող խցիկում ջերմաստիճանի ստուգում և կարգավորում	4000
12.	Սառնարանի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
	2. Խոհանոցային էլեկտրական կաթսայի վերանորոգման և պահպանման ծառայություն	
13.	Լույսաազդանշանային հանգույցի վիճակի ստուգում և կարգավորում	4000
14.	Էլեկտրական կաթսայի միացման և անջատման, հզորությունների փոփոխման ստուգում և կարգավորում	4000
15.	Էլեկտրական կաթսայի սանիտարական մաքրում	2000
16.	Էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում	4000
17.	Էլեկտրական կոնտակտային միացումների ամրաձգում	3000
18.	Էլեկտրական կոնտակտային միացումների փոխում նորով (ներառյալ կոնտակտային միացումները)	5000
19.	Էլեկտրական տաքացուցիչների (ՏԷՀ) փոխարինում նորով	3000
20.	Էլեկտրական կաթսայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և	5000

	էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	
21.	Էլեկտրական կաթսայի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
22.	Շարժական հանգույցների և մեխանիզմների ամրության ստուգում և ամրաձգում	3000
23.	Ջրի արտահոսքի փականի մաքրում կամ փոխարինում նորով	3000
	3. Խոհանոցային էլեկտրական սալօջախի վերանորոգման և պահպանման ծառայություն	
24.	Արտաքին զննումից հետո անհրաժեշտության դեպքում սալիկների սանիտարական մշակում	2000
25.	Սալօջախների վերանորոգում (էլեկտրականՏԷՀ-երի փոխարինում նորով)	4000
26.	Սալօջախների առանձին օջախի վերանորոգում կամ փոխարինում նորով	4000
27.	Էլեկտրական սալօջախի հանգույցների և առանձին դետալների ստուգում և անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինում նորոով	4000
28.	Էլեկտրական կաթսայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
29.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
30.	Ազդանշանային համակարգի, սալօջախների հզորությունների բռնակ-կարգավորիչների և երեսապատման միացումների ստուգում և անհրաժեշտության դեպքում ամրաձգում	4000
31.	Էլեկտրական սալօջախի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
32.	Էլեկտրական սալօջախի միացման և անջատման, հզորությունների փոփոխման ստուգում և վերանորոգում	3000
33.	Ջերմամեկուսիչ շերտի ստուգում և կարգավորում	5000
	4. Օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություն	
34.	Պրոֆիլակտիկա՝ օդորակիչի մաքրում կեղտերից	5000
35.	Օդորակիչի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
36.	Արտահոսքի վերացում	5000
37.	Խլադոգենտի լիցքավորում (ֆրեոն) (1 կգ)	15000
38.	Ֆիլտրի փոխարինում նորով (ներառյալ ֆիլտրը)	5000
39.	Կոմպրեսորի վերանորոգում կամ փոխարինում նորով	15000
40.	Ռեվերսի կլապանի վերանորոգում կամ փոխարինում նորով	10000
41.	Ռելեի վերանորոգում կամ փոխարինում նորով	7000
42.	Ֆեն-շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	10000
43.	Կառավարման սալիկի վերանորոգում կամ փոխարինում նորով	5000
44.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
45.	Էլեկտրոկոնդեսատորի փոխարինում նորով (ներառյալ էլեկտրոկոնդեսատորը)	8000
46.	Օդորակիչի հանում և տեղադրում (ներառյալ աշտարակը)	30000
47.	Օդորակիչի հանում և տեղադրում (առանց աշտարակի)	15000

	5. Լվացքի մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն	
48.	Սանիտարահիգիենիկ մաքրում (ջրի փողրակների և առանձին դետալների մաքրում)	3000
49.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
50.	Համակարգի առանձին հանգույցների անսարքությունների վերացում	3000
51.	Խափանված դետալների վերանորոգում կամ փոխարինում նորով	4000
52.	Շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	10000
53.	Լվացքի մեքենայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
54.	Լվացքի մեքենայի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
55.	Լվացքի մեքենայի կառավարման բլոկի վերանորոգում	10000
56.	Լվացքի մեքենայի ջեռուցման պոմպի վերանորոգում կամ փոխարինում նորով	8000
57.	Լվացքի մեքենայի էլեկտրական տաքացուցիչի փոխարինում նորով (ներառյալ էլ. տաքացուցիչը)	15000
58.	Լվացքի մեքենայի ջերմաստիչանի ցուցիչի (сенсор)փոխարինում նորով (ներառյալ ցուցիչը)	8000
	6. Ջրի պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություն	
59.	Էլեկտրաշարժիչի աշխատանքի ստուգում և վերանորոգում	40000
60.	Էլեկտրաշարժիչի աշխատանքի ստուգում և փոխարինում նորով	12000
61.	Խափանված դետալների վերանորոգում կամ փոխարինում նորով	3000
62.	Սանիտարական մաքրում	3000
63.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
64.	Ջրի պոմպերի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
65.	Ջրի պոմպերի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
	Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ պահեստամասեր և օժանդակ նյութերի անվանումները	
	1. Սառնարանների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
1.	Կոնդենսատոր	5000
2.	Մանրիլային խողովակ (1մետրը)	1000
3.	Կոմպրեսոր հզորությունը՝ 150վտ	41000
4.	Կոմպրեսոր հզորությունը՝ 185վտ	45000
5.	Կոմպրեսոր հզորությունը՝ 350վտ	51000
6.	Կոմպրեսոր հզորությունը՝ 425վտ	78000
7.	Գոլորշիատոր (испаритель)	15000
8.	Չորացնող ֆիլտր	2000
9.	Վերադարձնող խողովակ (1մետրը)	2500

10.	TRV (ջերմաստիճանի վերահսկվող ընդլայնման փական)	20000
11.	Ռելե	5000
12.	Ջերմաստիճանի տվիչի անջատիչ	3000
13.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
14.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
15.	Լուսարձակիչ	2000
	2. Խոհանոցային էլեկտրական կաթսայի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
16.	Կաթսայի տարա (250լ.)	70000
17.	Էլեկտրական խողովակային տաքացուցիչ (ТЭН)	7000
18.	Էլեկտրական խողովակային տաքացուցիչների կափարիչ	1000
19.	Կաթսայում սննդի մակարդակի փական	3000
20.	Կաթսայի կափարիչ	10000
21.	Անվտանգության փական	2000
22.	Անվտանգության փական բարձր ճնշման համար	5000
23.	Տարայի մեջ ջուր լցնելու խողովակ (1մետրը)	500
24.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
25.	Արտահոսքի փական	3000
26.	Միացման և անջատման, հզորությունների փոփոխման կարգավորիչ	5000
27.	Լույսաազդանշանային հանգույց	3000
28.	Կառավարման բլոկ	15000
29.	Մանոմետր	5000
30.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
31.	Կաթսայի կափարիչի բռնակ	1000
	3. Խոհանոցային էլեկտրական սալօջախի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
32.	Էլեկտրական տաքացուցիչ (ТЭН)	7000
33.	Էլ. սալօջախի կորպուս	35000
34.	Սալօջախ (ներառյալ տենը) (1 հատը)	15000
35.	Կորպուսի վրա սալօջախների տեղադրման կարգավորիչ-հեղյուսներ(болти) (1 հատը)	500
36.	Կորպուսի վրա սալօջախների ամրացման ամրակներ(шпильки) (1 հատը)	500
37.	Ազդանշանային համակարգ	3000
38.	Սալօջախների միացման-անջատման, հզորությունների փոփոխման բռնակ-կարգավորիչներ	1000
39.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000

40.	Էլեկտրասնուցման հաղորդալարերի կառավարման բլոկ	20000
41.	Ջերմամեկուսիչ շերտ	5000
42.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
	4. Օդորակիչների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
43.	Կոմպրեսսոր 9000 BTU	47000
44.	Կոմպրեսսոր 12000 BTU	52000
45.	Կոմպրեսսոր 18000 BTU	75000
46.	Ռեվերսի կլապան	8000
47.	Ռելե	5000
48.	Ֆեն-շարժիչ	12000
49.	Կառավարման սալիկ	15000
50.	Առջևի պատյան	5000
51.	Շերտավարագույր	3000
52.	Մեկուսացնող ժապավեն (1 մետրը)	500
53.	Ջրահեռացման խողովակ (1 մետրը)	500
54.	Հեռակառավարման վահանակ	5000
55.	Էլեկտրասնուցման ցուցիչ	3000
56.	Ռեժիմների ցուցիչ	3000
57.	Ջերմաստիճանի ցուցիչ	3000
58.	Ձեռքով միացման/անջատման (վթարային) սեղմակ	2000
59.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
60.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
61.	Հենակ	5000
	5. Լվացքի մեքենաների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
62.	Զտիչ (ֆիլտր)	3000
63.	Առանցքակալ	5000
64.	Փական	2000
65.	Գոտի (ռեմեն)	5000
66.	Զսպանակ	1000
67.	Խաչուկ	15000
68.	Էլեկտրաշարժիչ	30000
69.	Ջրահեռացման պոմպ	15000
70.	Էլեկտրական կառավարման բլոկ	15000

71.	Բռնակ-կարգավորիչ անհրաժեշտ ծրագիր ընտրելու համար	1000
72.	Ջրի արտահոսքի փողրակ (1 մետրը)	1000
73.	Ջրի մակարդակի որոշման կարգավորիչ	2000
74.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
75.	Պտտվող թմբուկ	10000
76.	Ջրահեռացման կանգնակ	5000
77.	Դուռ	8000
78.	Դռան փական	5000
79.	Դռան ծխնի	2000
	6. Ջրի պոմպերի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
80.	Պոմպի պատյան	20000
81.	Էլեկտրաշարժիչ (0.550 կվտ հզորության)	40000
82.	Էլեկտրաշարժիչ (0.750 կվտ հզորության)	50000
83.	Էլեկտրաշարժիչ (1.5 կվտ հզորության)	70000
84.	Էլեկտրաշարժիչ (3.0 կվտ հզորության)	90000
85.	Էլեկտրաշարժիչ (4.0 կվտ հզորության)	100000
86.	Էլեկտրաշարժիչ (15.0 կվտ հզորության)	180000
87.	Էլեկտրաշարժիչի կափարիչ	3000
88.	Էլեկտրաշարժիչի լիսեռ	3000
89.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
90.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
91.	Հովացուցիչ	5000
92.	Հովացուցիչի կափարիչ	1000
93.	Աշխատող ակ	3000
94.	Պտտվող ամրակ	3000
95.	Անշարժ ամրակ	3000
96.	Հենակ	5000
Ընդամենը՝ առավելագույն միավոր գների հանրագումար		**1917000**

Ծանուցում՝

Սույն պայմանագրի շրջանակներում՝ էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների համար պլանավորված առավելագույն գումարը կազմում է 3302000 (երեք միլիոն երեք հարյուր երկու հազար) ՀՀ դրամ:

Վերանորոգման ծառայությունների ժամանակ օգտագործվող բոլոր նյութերն ու ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:

***** ՔԿ ծառայության և հիմնարկների հասցեները՝**

N	ՔԿ հիմնարկների անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)
1	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն	ք. Երևան, Արշակունյաց 63
2	ՀՀ ԱՆ «Դատ.- ների հիվանդանոց» ՔԿՀ	ք.Երևան Արշակունյաց 2
3	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 2
4	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 7
5	ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ	ք.Երևան, Նալբանդյան 104
6	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղ, թիվ 30/1
7	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ	Կոտայքի մարզ,ք. Հրազդան, Միկրոշրջան 45
8	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան
9	ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ	Արագածոտնի մարզ գ. Կոշ
10	ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ	Շիրակի մարզ Հառիճ համայնք
11	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ	Լոռու մարզ ք. Վանաձոր, Տավրոսի 20
12	ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ	Սյունիքի մարզ ք.Գորիս, Նարեկացու 5
13	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ	Արմավ մ. ք. Էջմիածին, Էջմիածին- Չոբանքարա խճուղի թիվ 23.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արտաշատ մ/ճ
հ/հ 2051532055341001
ՀՎՀՀ 84485538

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«09» «հոկտեմբեր» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	50531200/2	էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	3302000	3302000	3302000	**3302000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արտաշատ մ/ճ
հ/հ 2051532055341001
ՀՎՀՀ 84485538

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«09» «հոկտեմբեր» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«09» «հոկտեմբեր» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն